

Ռադիո SEVAN

Ունկնդրեցե՛ք ՌԱՏԻՕ ՍԵՒԱՆ-ը

Լիբանանի բոլոր շրջաններում մեջ, հետեւեալ ալիքներում վրայ

- * Լիբանանի եւ Սուրիոյ ծովեզերայ շրջաններում, Լեռնալիբանանի, Պեքաայի, Սայտայի եւ Թրիփոլիի մեջ՝ 101.5 FM ալիքին վրայ:
- * Հիւսիսային Լիբանանի մնացեալ շրջաններում մեջ 101.3 FM ալիքին վրայ:
- * Պէյրուօի եւ Լեռնալիբանանի մեջ Լաե՛ն՝ 90.8 FM ալիքին վրայ:

Հեռ.: 01-567161-2-3 Fax: 01-567168

* Cablevision 11700 GHz digital. * Կայքէջ: www.radiosevan.com

ՍՈՒՐԻԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍԻՃԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՅԵԼԵՅ ՊԱՍՏԱՆԵՐԸ ԵՒ ԵԱՐԶԷ ՆԱԽԱԳԱՀ ՍԵԼԵՅՍԱՆ.«ԲԱՆԱԿԸ ԴԱԽԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԱՂԹԱՀԱՐՈՂ ՊԱՐԻՍՊՆ Է՛»

Սուրիական բանակի հրամանատարութեան բարձրաստիճան պատուիրակութիւն մը, բանակի ընդհանուր հրամանատար, զօրավար Ալի Յապի-պի գլխաւորութեամբ ժամանեց Պէյրուօ, եւ այցելեց Պաապատայի պալատ, ուր հանդիպում



Սուրիական բանակի հրամանատարութեան բարձրաստիճան պատուիրակութիւն մը, բանակի ընդհանուր հրամանատար, զօրավար Ալի Յապի-պի գլխաւորութեամբ ժամանեց Պէյրուօ, եւ այցելեց Պաապատայի պալատ, ուր հանդիպում

եւ հայրենիքի ծառայութեան իր առաքելութեան մեջ կը մը-նայ անաչառ:

Հանրապետութեան նախագահը ընդունեց նախկին վարչապետ Նեժիպ Միքաթի, պետական նախարար Նեժիպ Լահուտը, մշակոյթի նախարար Թամմա Սալամը, ՄԿԿ-ի ընդհանուր քարտուղարին անձնակազմի ներկայացուցիչ Մայքըլ Ուիլիամսը:

Լիբանան այցելող սուրիական բանակի ընդհանուր հրամանատարութեան պատուիրակութիւնը այցելեց Եարզէ, որ հանդիպում մը ունեցաւ լիբանանեան բանակի ընդհանուր հրամանատար, զօրավար Ժան Ղառուօնի հետ: Սուրիական բանակի հրամանատար, զօրավար Ալի Յապիպ փոխանցեց լիբանանեան բանակին զօրակցելու սուրիական իշխանութիւններուն պատրաստակամութիւնը, լիբանանեան բանակը նկատելով երկրին միասնակցութիւնը խորհրդական շղթայի միջոցով: Իր կարգին, զօրավար Ղառուօնը ընդհանուր թշնամիին դէմ միացեալ կեցողութեամբ որդեգրելու եւ համագործակցելու կոչ մը ուղղեց գոյգ երկիրներուն պաշտպանութեան կառույցներուն:

Սուրիական զօրավար Միշէլ Սըլէյմանը ընդունեց վարչապետ Ֆուատ Սիհիորան եւ խորհրդակցութիւն մը ունեցաւ կառավարութեան յաջորդ նիստին ընթացքին ընտրուած լիբանանեան կառավարութեան նախարար Թալալ Արսլանը:

ՍԱԱՏ ՀԱՐԻՐԻ ԱՅՅԵԼԵՅ ԱՅՆ ԷԼ ԹԻՆԷ

Սուրբաբալ Յոսանք խորհրդարանական խմբաւորումի նախագահ Սաատ Հարիրի այցելեց Այն Էլ Թինէ եւ հանդիպում մը ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրիին հետ: Հանդիպումը առիթ մը եղաւ քննարկելու ներ-լիբանանեան բեմին վերջին զարգացումները, ինչպէս նաեւ ընտրական գործընթացը: Սաատ Հարիրի, Այն Էլ Թինէյն մեկնեցաւ առանց որեւէ յայտարարութեան: Պըրրի նաեւ ընդունեց երիտասարդական հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Թալալ Արսլանը:

ՄԻԹՐԻ ԵՒ ՄԻՔԱԹԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ԱՆՏԵՂԻ ԲԱՐՈՉԱՐԵԱԸ

Նախկին վարչապետ Նեժիպ Միքաթի այցելեց Պաապատա եւ հանդիպում մը ունեցաւ հանրապետութեան նախագահ, զօրավար Միշէլ Սըլէյմանի հետ: Հանդիպումն տեղ, Միքաթի ըսաւ, թէ հանրապետութեան նախագահը եւ ինք անտեղի կը գտնեն ընտրութիւններու ընթացքին ոմանց օգտագործած բռնապաշարը: «Անհրաժեշտ է պահպանել Լիբանանի ժողովրդավարական դիմագիծը», ըսաւ նա: Միքաթի նաեւ անվայել նկատեց նախագահ Սըլէյմանի անունը ընտրական նեղ հաշիւներու մեջ շահարկելու ոմանց քայլերը: Տեղեկատուութեան նախարար Թարեք Միթրի դատապարտեց քաղաքական կարգ մը հոսանքներու օգտագործած ընտրական բռնապաշարը: Ֆիւզըր Նիւզէն սփռուած հաղորդումի մը ընթացքին, Միթրի դիտել տուաւ, որ քաղաքական հոսանքներն են որ կը պղտորեն երկրի մը լրատուութեան մարզը, ինչպէս նաեւ քաղաքական հորիզոնը: Նախարարը մաղթեց, որ լիբանանցիները շուտ ձեռքբազաւորին ընտրական քարոզչութեան անունով կատարուող ցեխարձակումներն եւ մինչեւ իսկ դատապարտեն անոնց հեղինակներուն անվայել արարքները:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏ՝ ԱՅՍՕՐ

Լիբանանեան կառավարութիւնը այսօր երեկոյան ժամը 6-ին, Պաապատայի պալատին մէջ պիտի գումարէ ընթացիկ նիստ մը, եւ պիտի քննարկէ 108 կէտերէ բաղկացած օրակարգ մը: Սկզբունքով, կառավարութեան նիստի օրակարգին վրայ ընդգրկուած են Առաջին կարգի պաշտօններուն նշանակումները:

ԼԱՎՐՈՎ ԿԸ ՍԱԳԹԷ ՃԱՆՉՆԱԼ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լավրով մաղթեց, որ Լիբանանի խորհրդարանական ընտրութիւնները կայանան ազատ, քափանցիկ պայմաններու տակ: Լավրով՝ միջազգային ընտանիքէն պահանջեց ճանչնալ խորհրդարանի ընտրութիւններուն արդիւնքը եւ չկրկնել Համասի հետ պատահած սխալը: Ան նշեց, թէ օրին՝ Համասի յարթանակը ընդունուելու պարագային միջ-պաղեստինեան հակամարտութիւնը պիտի խնայուէր այսօր:

«ԼԻԲԱՆԱՆԻ ՆԵՐՈՒԸ ԱՆՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ Է», ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԻՆԻՈՐԱ

Վարչապետ Ֆուատ Սիհիորա, վարչապետարանին մէջ ընդունեց փոխ վարչապետ Իսամ Ապու Շամրան եւ անոր հետ քննարկեց երկիրը յաջող հարցեր: Վարչապետը նաեւ ընդունեց Լիբանանի մօտ Ռուսիոյ դեսպան Պորիս Չախարչուքը: Անի ուշ, վարչապետը ընդունեց ճարտարարուեստի Միութեան նախագահ Ֆետի Ապուտը, ինչպէս նաեւ իրատաժեղէնի մարզը ներկայացնող գործատերեր:

Վարչապետ Սիհիորա ընդունեց Պեքաայի շրջանը ներկայացնող ընտանիքներու պատուիրակութիւն մը:

«Տագնապներու ընթացքին մարդկային կարողականութիւնները ղեկավարելու» խորագիրին տակ կազմակերպուած միջազգային խորհրդաժողովին բացման արարողութեան ընթացքին իր արտասանած խօսքին մէջ, վարչապետ Ֆուատ Սիհիորա յայտնեց, թէ Լիբանան կըրոնայ աշխարհի ամենէն շատ ազդուող պետութիւններէն մէկը դառնալ միջազգային ելեմտական փոփոխութիւններէն, սակայն միւս կողմէ, իր քայլերը ուսումնասիրուած կերպով անելու պարագային, Լիբանան կրնայ ամենաշատ օգտուող պետութիւններէն մէկը դառնալ: Ան դիտել տուաւ, որ Լիբանան չունի բնական հարստութիւններ, սակայն ան մնայուն կերպով կը վստահի իր երիտասարդութեան կարողականութեան:

Կ Ո Չ

Յարգելի հայ քուէարկող,
Լիբանանահայութիւնը իբրեւ Լիբանանեան հայրենիքի հարազատ մէկ համայնքը, Յունիս 7-ին պիտի կատարէ քաղաքացիական իր պարտականութիւնը եւ մասնակցի խորհրդարանի ընտրութիւններուն:
Խորհրդարանի ընտրութիւնները անկիւնաքարը պիտի ըլլան վաղուան Լիբանանին:
Մենք համոզուած ենք, որ միայն գերիշխան, անկախ Լիբանան մը պիտի երաշխաւորէ անոր բոլոր զաւակներուն համակեցութիւնը, պետականութեան բարգաւաճումը, քաղաքացիական խաղաղութիւնը եւ ապահովական կայունութիւնը:
Մենք իբրեւ վաղուան գերիշխան Լիբանանի զաւակները պիտի չընդունինք, որ Լիբանանը դառնայ միջ-պետական փոխարքերութիւններու թատերաժայրը:
Մենք կը հաւատանք որոշումի տեր, անկախ, գերիշխան պետականութեան, եւ մեր ձեռքը կը մեկնենք, այն ուժերուն որոնց համար պետականութիւն կերտելը ընտրանք ու համոզումը է եւ ոչ՝ միջոց:
Մենք կը հաւատանք անկախութեան, համոզուած ենք, եւ վստահ որ պիտի ընդառաջէ մեր կողին, եւ ներկայ պիտի գտնուիք ՇԱԲԱԹ, 16 ՄԱՅԻՍ 2009, երեկոյան ժամը 7:00-ին, Հաճնոյ նախկին Սահակեան Գոլէճի շրջափակին մէջ տեղի ունենալիք հրապարակային հաւաքին, որուն պիտի յաջորդէ ազգային յեղափոխական երգերու փառատօն:
Ս.Գ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան կատարեց դալիճի փոփոխութիւն: Նախագահին հրամանագիրով Գեորգ Պետրոսեան նշանակուեցաւ աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար: Արմէն Աշոտեան նշանակուեցաւ կրթութեան եւ գիտութեան նախարար: Գերասիմ Ալավերտեան նշանակուեցաւ գիւղատնտեսութեան նախարար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՕՏ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԳԵՄՊԱՆԸ ԿԸ ԼՈՒՍԱԲԱՆԷ

Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Մարի Եովանովիչ, ի պատասխան վերջերս Միացեալ Նահանգներու կողմէ Հայաստանին ցուցաբերուող օժանդակութիւնը դարձեցնելու մասին շարք մը լրատուամիջոցներուն՝ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ 1988-էն ի վեր, Միացեալ Նահանգներ, անելի քան երկու միլիառ տոլարի ներդրում կատարած է Հայաստանին, իսկ 2010-ը ելեմտական տարուան համար կատարուելիք ներդրումները 25 առ հարիւր անելի են քան՝ 2009 ելեմտական տարուան ներդրումը, հետեւեալը՝ Միացեալ Նահանգներ կը շարունակէ հաւատարիմ մնալ Հայաստանի եւ Հայ ժողովուրդին հետ իր վաղեմի գործընկերութեան:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ Կ'ԱՅՅԵԼԷ ԵՐԵՒԱՆ

Մայիս 13-էն 15-ի միջեւ, Հայաստան պիտի այցելէ Մեծն Բրիտանիոյ Հարաւային Կովկասի յատուկ ներկայացուցիչ Պրայըն Ֆոլը:
Ֆոլ հանդիպումներ պիտի ունենայ նախագահ Սերժ Սարգսեանի, արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպասեանին եւ այլ պաշտօնակատարներու հետ:

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՒԱՔ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 16 Մայիս 2009-ին, երեկոյան ժամը 7:00-ին, Նոր Հաճնոյ նախկին Սահակեան Գոլէճի շրջափակին ներս:
Հաւաքի աւարտին տեղի պիտի ունենայ ազգային յեղափոխական երգերու փառատօն:
ՀՐԱԽԵՐ
Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Ս.Գ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿ